ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

<<"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում >>

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01

ք. Կապան «04» մարտ 2021թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տ-ՔՆԱԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սուքիասյանի, որը գործում է ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<**"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում**>> աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 35,520,492 (երեսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար չորս հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, որից 5 920 082 (հինգ միլիոն ինը հարյուր քսան հազար ութսուներու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	գ/հ ք. Երևան, Փափազյան 8
ՀՀ 900312400063	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 09426088	Հ/Հ 1150025709497001
	ՀՎՀՀ 02648403
----------	Հ.Սուքիասյան ----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 04 » մարտ 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ*

<<"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> աշխատանքների կատարման

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը	Գումարը	Կշիռը՝ ըստ հրավերի /%/	Կշիռը՝ ըստ մասնակցի/ %/
1	2	3	4	5	6	7	8
	Տանիք, միաձույլ ծածկասալ, սյան և ռիգելի հանգույցի ուժեղացում						
	Քանդման աշխատանքներ						
1	Ասբոհերձաքարե տանիքածածկի քանդում	100 քմ	0,09	16 699	1 503		
2	Տանիքի թիթեղյա մասերի քանդում	100 քմ	0,20	16 699	3 280		
3	Տանիքի մետաղական կրող կմախքի(ֆերմաների) քանդում	տն	0,02	50 096	1 052		
4	Տանիքի մետաղական պրոֆիլից մարդակի(կավարամածի) քանդում	տն	0,03	50 096	1 531		
5	Առանձին տեղերում և բետոնի խոռոչներում գաջի քանդում	100 քմ	0,06	50 096	3 006		
6	Երկաթբետոնե ծածկի քանդում միաձույլ ծածկասալի տեղամասում	խմ	4,35	10 019	43 603		
7	Երկաթբետոնե ծածկի քանդում նախկին սանհանգույցի հորանների միաձույլ ծածկասալի տեղամասում մինչև ծածկասալի վերին նիշը	խմ	0,036	10 019	361		
8	Երկաթբետոնե ծածկի քանդում կապային սալերով անցնող հորանների տեղամասերում	խմ	0,21	13 359	2 815		
9	Երկաթբետոնե քանդում սյան և ռիգելի հանգույցում, ռիգելի վերևի գոտում	խմ	0,624	13 359	8 336		
10	Բետոնե քանդում հավաքովի ե/բ ծածկասալերի միջև կարաններում, ծածկասալի ճակատների և ռիգելների միջև	գծմ	4,49	8 349	37 522		
11	Հավաքովի երկաթբետոնե ծածկասալի կլոր անցքի վերին գոտու քանդում 80մմ լայնությամբ	խմ	0,0995	8 349	831		
12	Հավաքովի երկաթբետոնե արտաքին պատերի և կրող տարրերի միջև բետոնի քանդում	խմ	0,8265	8 349	6 901		
13	Պարապետի պատային սալի գլխիկում բետոնի քանդում	խմ	2,50	8 349	20 853		
14	Տաշտաձև ծածկասալում բետոնե հիմնատակի և անցքի եզրագծի քանդում	խմ	0,30	8 349	2 505		
15	Հավաքովի ե/բ սյուների և արտ. պատերի միջև բետոնի քանդում	խմ	0,0139	8 349	116		
16	Տանիքածածկից և հորանների առանձին անցքերի բացումից գոյացած շինաղբի մաքրում	տն	4,63	15 424	71 416		
17	Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	35,44	10 019	355 101		
18	Շին աղբի տեղափոխում 12կմ հեռավորության վրա	տն	35,44	2 004	71 020		
19	Ապամոնտաժումից գոյացած նյութերի և կոնստրուկցիաների բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	0,05	16 699	861		
20	Ապամոնտաժումից գոյացած նյութերի և կոնստրուկցիաների տեղափոխում 5կմ հեռավորության վրա	տն	0,05	16 699	861		

	Ընդամենը				633 473	**2,14**	2,14
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ, պատեր						
	Սյան և ռիգելի հանգույցի ուժեղացում 5-րդ առանցքով 9,00 նիշում						
21	Սյուների ուժեղացում մետաղե տարրերով գոյություն ունեցող շենքում	տն	0,241	577 968	139 160		
22	Հավասարակող անկյունակ 75x75x8	գծմ	10,650	4 919	52 392		
23	Հավասարակող անկյունակ 50x50x6	գծմ	5,570	2 733	15 223		
24	Պողպատաթերթ 600x40x6	քմ	0,2880	34 982	10 075		
25	Պողպատաթերթ 280x100x8, 420x100x8, 420x45x8	քմ	1,5782	43 728	69 010		
26	Ամրան A III Ø16	տն	0,0072	491 940	3 526		
27	Հորիզոնական անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=20(18)մմ 100մմ խորությամբ	100 անցք	0,24	56 075	13 458		
28	Անցքերի լցում պոլիմեր շաղախով L=100մմ երկարությամբ Ø20մմ անցքերում Ø16 AIII խարիսների համար	լիտր	0,1282	15 922	2 041		
29	Ռիգելների ուժեղացում մետաղե տարրերով գոյություն ունեցող շենքում (մետաղե տարրեր)	տն	1,019	577 968	588 794		
30	Հավասարակող անկյունակ 80x80x8	գծմ	24,480	6 341	155 217		
31	Հավասարակող անկյունակ 63x63x6	գծմ	24,480	3 498	85 637		
32	Հավասարակող անկյունակ 50x50x6	գծմ	2,400	2 733	6 559		
33	Պողպատաթերթ 380x80x10, 390x80x10, 555x80x10	քմ	7,8824	51 490	405 863		
34	Պողպատաթերթ 555x60x12	քմ	0,0666	61 766	4 114		
35	Պողպատաթերթ 230x80x8	քմ	0,0736	41 542	3 057		
36	Պողպատաթերթ 180x65x6	քմ	0,0468	31 703	1 484		
37	Անցքերի փորում հին ե/բ ծածկի սալերում 50x100մմ չափսերով h = 40*2=80 մմ	100 հատ	0,82	56 075	45 981		
38	Անցքերի փորում հին ե/բ կապի սալերում 50x100մմ չափսերով h = 250 մմ	100 հատ	0,12	56 075	6 729		
39	մինչև 0,1մ² մակերեսով անցքերի փակում ե/բետոնե ծածկասալերում B25 դասի մանրահատիկ բետոնով	խմ	0,289	116 008	33 507		
40	Սյան և ռիգելի հանգույցի միաձուլում B25 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	0,498	116 008	57 807		
41	Ամրան A I Ø 10	տն	0,0484	491 940	23 821		
42	Հենարանների տեղադրում և քանդում կրող կմախքի տարրերի(ծածկասալերի) տակ՝ ուժեղացվող կոնստրուկտիվ տարրերի վրա եկող բեռնվածքների ժամանակավոր բեռնաթափման համար	100 քմ հորիզոնական պրոյեկցիա	0,863	444 355	383 549		
43	Պատերի բարձրորակ սվաղում ցեմենտյա շաղախով մետաղական ցանցի վրա առանց մետաղական ցանցի տեղադրման	քմ	6,234	5 517	34 394		
44	Պատերի սվաղի տակ 100x100մմ բջիջով Ø3Bp մետաղական ցանցի կմախքի տեղադրում	քմ	6,234	2 714	16 916		
45	Առաստաղի(ռիգելի ներքևի նիստ) բարձրորակ սվաղում ցեմենտյա շաղախով մետաղական ցանցի վրա առանց մետաղական ցանցի տեղադրման	քմ	7,134	5 517	39 364		
46	Առաստաղի սվաղի տակ 100x100մմ բջիջով Ø3Bp մետաղական ցանցի կմախքի տեղադրում	քմ	7,134	2 714	19 361		

47	Սյուների բարձրորակ սվաղում ցեմենտյա շաղախով մետաղական ցանցի վրա առանց մետաղական ցանցի տեղադրման	քմ	4,871	5 517	26 877		
48	Սյուների սվաղի տակ 100x100մմ բջիջով Ø3Bp մետաղական ցանցի կմախքի տեղադրում	քմ	4,871	2 714	13 219		
49	Ռիգելների վերևի գոտու և սյուների վերին գլխիկի ուժեղացում ե/բետոնով վերևից B25 դասի բետոնով	խմ	0,665	116 008	77 169		
50	Մետաղական ցանց Ø3Bp 100x100 բջիջով	քմ	6,0470	2 714	16 410		
	Ընդամենը				2 350 712	**7,94**	7,94
	Ծածկասալերում անցքերի փակում տեղամասեր						
51	Միաձույլ ե/բ կողավոր ծածկերի կառուցում B20 դասի բետոնով գոյություն ունեցող շենքի տաշտաձև ծածկասալում	խմ	0,097	75 332	7 288		
52	Ամրան A III Ø 16	տն	0,0087	491 940	4 286		
53	Ամրան A III Ø 8	տն	0,0011	491 940	530		
54	Ամրան A I Ø 8	տն	0,0032	491 940	1 574		
55	Ամրան A I Ø 6	տն	0,0019	491 940	943		
56	Հորիզոնական անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=20(12)մմ 200մմ խորությամբ	100 անցք	0,06	39 224	2 353		
57	Նույնը՝ d=20մմ 210մմ խորությամբ	100 անցք	0,08	39 224	3 138		
58	Անցքերի լցում պոլիմեր շաղախով	լիտր	0,3370	15 080	5 082		
59	մինչև 0,1մ² մակերեսով առանձին անցքերի փակում ե/բետոնե ծածկասալերում B25 դասի մանրահատիկ բետոնով	խմ	0,062	61 604	3 794		
60	երկտաշտ կապային սալի տաշտի պատերի հասարակ սվաղ ցեմենտե շաղախով մետաղական ցանցի վրա (պաշտպանիչ շերտ)	քմ	0,800	30 159	24 127		
61	Մետաղական ցանց Ø4Bp 100x100 բջիջով	քմ	2,050	2 948	6 044		
62	Արտաքին պատերի և կրող կմախքի տարրերի կարանի փակում մոնտաժային փրփուրով	կարանի 100մ	0,684	39 224	26 829		
63	Մոնտաժային փրթուր(V=0,8235մ³)	հատ	17,00	3 498	59 470		
64	Ներդիրների տեղադրում արտաքին պատերի և սյուների գլխիկների միջև զոդելով (ամրաններ Ø16AI 16հատ)	տն	0,02272	825 368	18 755		
65	Ներդիրների մակերևույթի հակակոռոզիոն ներկում	տն	0,04	77 486	3 310		
	Ընդամենը				167 524	**0,57**	0,57
	Ծածկասալի միաձույլ տեղամասեր						
66	Միաձույլ ե/բ կողավոր ծածկերի կառուցում B20 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	5,898	86 054	507 521		
67	Ամրան A III Ø 16	տն	0,3039	491 940	149 515		
68	Ամրան A III Ø 12	տն	0,2354	491 940	115 783		
69	Ամրան A III Ø 10	տն	0,0207	491 940	10 162		
70	Ամրան A III Ø 8	տն	0,0581	491 940	28 560		
71	Ամրան A I Ø 8	տն	0,1026	491 940	50 491		
72	Ամրան A I Ø 6	տն	0,0103	491 940	5 049		

73	Միաձույլ ծածկասալում ամբարձիչի անցքերի և տանիքի մտոցի մետաղե շրջանակների տեղադրում (մտոցը՝ առանց կափարիչի)	տն	0,069	1 202 047	83 031		
	Ընդամենը				950 113	**3,21**	3,21
	Ծածկի սալերի ուժեղացում						
74	Անցքերի փորում հին ե/բ ծածկի սալերում 50x40մմ չափսերով h = 50 մմ	100 հատ	3,6	21 702	78 128		
75	Ուղղաձիգ անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=10մմ 190մմ խորությամբ	100 անցք	0,98	21 702	21 268		
76	Անցքերի լցում պոլիմեր շաղախով	լիտր	1,4896	17 459	26 007		
77	Ծածկի սալերի ուժեղացում ե/բետոնով վերևից B20 դասի բետոնով	խմ	27,467	92 599	2 543 404		
78	Ամրան A-I Ø6	տն	1,3372	491 940	657 821		
79	Անցքերի բացում հին ե/բ ծածկի սալերի կլոր անցքերում Ø120մմ տրամագծով(օդափոխության հորաններում)	100 հատ	0,16	43 405	6 945		
80	Ամրան A III Ø 10	տն	0,0189	491 940	9 300		
81	Տանիքի տաշտաձև ծածկասալում և կապի սալերերի տաշտակում խարամի տաքացուցիչ շերտի տեղադրում	խմ	1,04	13 633	14 178		
82	Կապային սալերի (հորանների) անցքերում ուղղաձիգ պատերի մակերևույթի տորկրետացում 40մմ հաստությամբ ավազաշիթային մշակմամբ	քմ	3,374	22 297	75 220		
83	Մանրահատիկ բետոնի լցում հավաքովի ե/բ ծածկասալերի միջև կարաններում, ծածկասալի ճակատների և ռիգելների միջև	խմ	3,361	114 301	384 113		
84	Հավաքովի երկաթբետոնե ծածկասալի ուժեղացում կլոր անցքերում երկաթբետոնի վերևից տեղադրմամբ B25 մանրահատիկ բետոնով	խմ	0,7857	92 599	72 759		
85	Ամրան A III Ø 12	տն	0,0301	491 940	14 809		
86	Ամրան A III Ø 8	տն	0,0134	491 940	6 587		
87	Ամրան A I Ø 8	տն	0,0175	491 940	8 593		
88	Հենարանների տեղադրում և քանդում կրող կմախքի տարրերի(ծածկասալերի) տակ՝ ուժեղացվող կոնստրուկտիվ տարրերի վրա եկող բեռնվածքների ժամանակավոր բեռնաթափման համար	100 քմ հորիզոնական պրոյեկցիա	0,134	599 891	80 337		
	Ընդամենը				3 999 470	**13,51**	13,51
	Տանիքում օդափոխության հորանների պատեր	-					
89	Օդափոխության հորանների պատերի կառուցում 10 սմ հաստությամբ պեմզաբլոկով (400x200x100)	100քմ	0,0968	395 769	38 310		
90	Օդափոխության հորանների պատերի կառուցում 20 սմ հաստությամբ պեմզաբլոկով (400x200x200)	խմ	15,98	26 324	420 584		
91	Դեֆորմացիոն կարանների կառուցում փրփրապլաստից	մ	30,61	975	29 836		
92	Պատերի ամրանավորում	տն	0,151	527 617	79 670		
93	Ամրան A-1 Ø6	տն	0,114	491 940	56 081		
94	Ներդիր անկյունակ 50x4	մ	12,0	2 733	32 796		
95	Պեմզաբլոկից կառուցված պատերի դատարկությունների լցնում Բ7,5 դասի թեթև բետոնով	խմ	1,61	41 116	66 197		
96	Պատերի սվաղում ցեմենտյա շաղախով մետաղական ցանցի վրա	քմ	104,781	2 934	307 413		

	Ընդամենը				1 030 888	**3,48**	3,48
	Տանիքը						
97	Բետոնե սյունակների կառուցում տափաստների տակ B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	0,402	67 685	27 209		
98	Բետոնե պատերի կառուցում տափաստների տակ B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	9,532	67 685	645 144		
99	Հարթեցնող շերտ ցեմենտյա շաղախով 20մմ հաստությամբ	100 քմ	3,6515	244 128	891 441		
100	Գոլորշամեկուսացում մեկ շերտ ռուբերոիդով	100 քմ	3,6515	218 266	797 004		
101	Ջերմամեկուսիչ շերտ γ=500կգ/մ³ ծավալային կշռով խարամով 150մմ հաստությամբ	խմ	54,773	16 549	906 438		
102	Հարթեցնող շերտ ցեմենտյա շաղախով 30մմ հաստությամբ	100 քմ	3,6515	322 651	1 178 171		
103	Ամրանային ցանց, եռակցված Ø3 BpI 200x200 բջիջով	քմ	365,153	2 403	877 525		
104	Տանիքի փայտե կցորդների և կարկասի պատրաստում	խմ	26,334	183 866	4 842 011		
105	Տանիքի փայտե կոնստ. -ի մետաղական ամրացման դետալների (ճարմանդներ) տեղադրում	կգ	20,00	783	15 663		
106	Տանիքի փայտե կոնստ. -ի մետաղական ամրացման դետալների (ցինկապատ անկյունակներ, МЗП) տեղադրում	կգ	333,11	783	260 872		
107	Պտուտակ	հատ	2933	164	480 953		
108	Հավասարակող անկյունակ 63x63x5	գծմ	1,755	3 498	6 139		
109	Տանիքի ձեռնահարկի լուսամուտների տեղադրում	հատ	2,00	67 383	134 766		
110	Ցվիքի և ջրհոս ճոռի կառուցում ներկված ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստությամբ փայտե կավարամածով	մ	93,121	12 034	1 120 575		
111	Ամրան Bp Ø5	տն	0,0150 6	491 940	7 407		
112	Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով КП -21-05 0,5մմ հաստությամբ	100 քմ	4,643	494 960	2 298 164		
113	Տանիքի կավարամած նախագծային	խմ	2,5378	183 866	466 621		
114	Ջրհորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղով Ф-140մմ տրամագծով ձագարներով և արմունկներով	մ	75,00	12 034	902 515		
115	Ձագար	հատ	6,00	9 650	57 902		
116	Արմունկ	հատ	18,00	4 184	75 318		
117	Տանիքի պաշտպանիչ ճաղաշարի տեղադրում	100 գծմ	0,862	418 436	360 692		
118	շերտապողպատ 30x7	գծմ	69,08	10 813	746 951		
119	Քառակուսի խողովակ 20x2	գծմ	172,4	929	160 198		
120	Ամրան AIII Ø14	տն	0,1063	491 940	52 295		
121	Պտուտակ	հատ	176	164	28 860		
122	Մետաղական ճաղաշարի տարրերի յուղաներկում երկու անգամ	քմ	22,75	2 038	46 351		
123	Տանիքում անկյունային ձնապաշտպան արգելքների տեղադրում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ, 2000մմ երկարությամբ	ք.մ	27,56	7 464	205 707		
124	Փայտե կոնստրուկցիաների հրապաշպանություն	խմ	26,334	4 354	114 662		
125	Կավարամած հրապաշպանություն	100 քմ	4,68	29 027	135 837		
126	Տանիքի գագաթագծի և լանջերի կողերի թիթեղապատում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	ք.մ	29,69	4 512	133 950		

127	Ձեղնահարկի լուսամուտների կողերի թիթեղապատում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	քմ	29,52	4 512	133 204		
128	Տանիքում օդատարների գոգնոցների իրականացում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	քմ	18,68	4 512	84 281		
129	Տանիքում քիվի երեսապատում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	քմ	83,22	4 512	375 497		
130	Արտաքին խողովակավոր գույքային փայտամածի տեղադրում և քանդում	100 քմ ուղղաձիգ պրոյեկցիա	10,051	165 739	1 665 877		
	Ընդամենը				20 236 201	**68,36**	68,36
	Տանիքի լծորդում Ֆ-ով						
131	Տանիքի մետաղական կրող կմախքի իրականացում	տն	0,14	57 083	8 271		
132	Պողպատե տաշտաձև պրոֆիլի հեծան, N16	գծմ	1,200	11 872	14 246		
133	Քառակուսի խողովակ 80x4	գծմ	4,2	9 399	39 474		
134	Պողպատաթերթ 300x300x10	քմ	0,5400	46 498	25 109		
135	Հավասարակող անկյունակ 50x50x5	գծմ	10,00	2 473	24 740		
136	Հավասարակող անկյունակ 32x32x4	գծմ	24,480	1 781	43 593		
137	Պտուտակ	հատ	24	148	3 562		
138	Տանիքի մետաղական կրող տարրերի մակերևույթի հակակոռոզիոն ներկում	տն	0,14	40 335	5 844		
139	Տանիքի փայտե կարկասի պատրաստում	խմ	0,409	140 694	57 536		
140	Տանիքի չկազմակերպված ջրորդանում և լանջերի կողերի թիթեղապատում ցինկապատ թիթեղով 0.5մմ հաստությամբ	քմ	3,00	3 056	9 167		
141	Փայտե կոնստրուկցիաների հրապաշպանություն	խմ	0,409	1 190	487		
	Ընդամենը				232 029	**0,78**	0,78
	Ամբողջը				29 600 410	100	
	ԱԱՀ 20%				5 920 082		
	Ընդամենը				35 520 492		

Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Կապան, Ռ. Մինասյան, Թիվ 1 հիմնական դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312400063
ՀԱՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում
Հ/Հ 1550025709497 0
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 04 » մարտ 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
<<"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում >> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**<<"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում >>**	Պայմանագրի կնքման օր	2021թ. սեպտեմբեր 30
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	2021թ. սեպտեմբեր 30

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312400063
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Ս

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
հ/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150025709497[illegible]
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան

/ստորագրություն/

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
«Т-КОНСТРАКШН» ЗАО
"T-CONSTRUCTION" CJSC
02648403

Հավելված N 3
« 04 » մարտ 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված տարիաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700	<<"Կապանի թիվ 1 հիմնական դպրոց" ՊՈԱԿ-ի "Դ" մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում >>	-	-	10656000	17760246	17760246	28416393	35520492	35520492	35520492	35520492	35520492	35520492

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312400063
ՀՎՀՀ 09426098

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
հ/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150025709497 0
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« 04 » մարտ 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
« 04 » մարտ 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն